

ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԱԼՔՈՍԸ

ՄԻՆԵՐԿՈՒ ԽՕՍԸ

Կամենսկով հալ գիւղացու ամբողջ կեանքն իւր ստացուածքով նկարել ու նկարագրել՝ աշխատութեանս համար նիւթ ընտրեցի Զաւակքը: Այս անգամ ամբողջ կերպով ամբողջացրած տալով հասարակութեանը, մանաւանդ ազգագրագէտներին, միմիայն մի մասը՝ «ԴԱՇՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ», կաշխատեմ այսուհետեւ տալ և միւս մասերն, ինչպէս՝ տնային գործիքները, արհեստական գործիքները, ամանեղէնները, կարասիները, շորերն ու զանազան տեսարաններ գիւղական կեանքից, իւրաքանչիւր մասն ամփոփ, ամբողջացրած:

Այնտեղ, ուր հարկաւոր եղաւ լիշեցի և Շիրակի ու Ախալցխայի գաւառի մասին, որոնց տարբերութիւնը Զաւակքից զրեթէ ոչինչ է:

Գործիքների անունները գրական լեզուով են. մօտին դրած է և ժողովրդականը *):

ՄԻՔԸՆԻ ԽՕՒԸ ԶՈՒՆԻՔԻ ԳՈՐԾԵՐԻՆԷՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I.

Յ Ա Ն Ո Ց

Արբ անց են կենում ձմեռային երկար ամիսները, հարաւային հողմերը փչում, հալեցնում են սառած երկրի երեսը, զարնան դռները բացւում են ամեն կողմից՝ գիւղացին դուրս է հանում գոմից իւր գրաստներին, տանում ձիւնի ջրերից խօխջացող մօտակալ

*) Ժ. ժողովրդական, Թ. Թուրքերէն, ա. արշին, վ. վերշոկ:

առուակը ջրում, խամից հանում. մի քանի օրից, երբ տաքութիւնն ընկնում է գետին, դուրս է հանում 5 ամիս գոմում փակուած գոմէշներին, բակում *) և ապա տնէրին մի-մի կարմիր ձու տրաքացնում, լուծը դնում ուտերին և դուրս հանում: Հինգ ամիս կապուած, լուս չտեսած, վարենացած գոմէշները քիթը քամի մտած գիւթ հորթի նման չափա ընկնելով վազում են դէս ու դէն, մինչև լողնիլները, խամնալները, **) ապա տէրն առաջ է խառնում նրանց, ճիպտը ձեռին քշում տուն, լուծը թողնում, ցաւած ոտքերին աղաջուր անում, տրորում, շիւում, խամից հանում և լծելու համար պատրաստում:

Գրաստներին աղապէս վարեցնելու հետ միասին գիւղացիին միւս կողմից, շինում կամ նորոգում-կարկատում է իւր գործիքները: Եւ երբ ամեն բան պատրաստ է՝ նա առնում է սերմնացուն, գնում գիւղի էրէցի մօտ, գլխարկը հանում, չոքում օրհնել տալիս, բերում, խառնում ամբարում եղած հացահատիկին. ապա բառնում կռնի սալին արօրները, ջուակով սերմնացու հատիկը, գրաստների պաշար խուրձով խոտն՝ առաւօտ վաղ գնում դաշտ: Արտում մանկալը-սերմնացանը գործը չսկսած չոքում է Ամենակալի առաջ սրտաբուղիս աղօթում, խնդրում Նրա աջակցութիւնը, Տիրամօր միջնորդութիւնն, իւր հատիկն ու դարդը Նրան լանձնում, ապա դողնոցի պէս կապում դաստառակը մէջքից, սերմնացուն լցնում մէջը, ցանում: Բայց նախ քան ցանելը, նա արտը բաժանում է կորիների, (մարգերի), որ ցանելու համար հեշտութիւն լինի, և ապա անուհետև սկսում է վարել արտը.— լծում է արօրները, մաճից լինքը բռնում, հօտաղին նստեցնում հորիկի ուսին ու սգործը սկսում արտի մի լարմարաւոր ականջից:

Վարում է մինչև կէսօր, կամ ինչպէս իրենք են ասում՝ ցորեկ դառնալը. կէսօրին թողնում է գրաստներին, խոտը դնում առաջները, կերակրում, ապա մօտիկ առուակը տանում ջրում, քիչ էլ հանգիստ տալիս, ու նորից լծում. վարում է մինչև արևի մալր մտնիլը. արևը մալր մտնելիս նա թողնում է, արօրները գցում եղների ուսին հակառակ կողմով, գալիս է տուն, գիւշերը կենդանիներին մինչև լուս կերակրում (2 անգամ, մէկ երեկոյեան, մէկ էլ առաւօտեան շատ վաղ), ու նորից գնում արտը:

Այսպէս շարունակում է վարել մինչև ցանքի վերջանալը:

Ինքըստինքեան, ան տեղերը, որ դաշտավայր են, աւելի շուտ են

*) Բակ ասում են Ջաւախքում նախասննեակին:

**) Երբ երկար ման չգալուց շատ են ման գալիս և ոտքերին ցաւ դրում՝ դրան ասում են խամնալ:

սկսում ցանքն և աւելի շուտ էլ վերջացնում։ Իսկ այն տեղերը, ուր լեռնալիւն է՝ աւելի ուշ։ սովորաբար ցանքն սկսում է մարտի 15-ից, տեսւմ մինչև մարտի 15-ը, երկու ամիս։

Այն արտերը, որ աւելի բարձր դիրք ունին և ցուրտ կլիմայ՝ ցանում են զարի, իսկ այն արտերը, որ աւելի ցածր դիրք ունին և տաք կլիմայ՝ ցանում են ցորեն։ բաղի ալդ հերկերը ¹⁾ գրեթէ բոլորն էլ ցանում են ցորեն, խոզանները ²⁾ դարի։ ալդ առաւելութիւնը ցորենին տալիս են նրա համար, որովհետեւ նա աւելի տաք կլիմայ և պարարտ հող է պահանջում։

Յորենն աւելի առաջ են ցանում քան զարին։ սակայն զարին աւելի շուտ է հասնում՝ քան ցորենը ³⁾։

Սրբ վերջանում է գարու ու ցորենի ցանքը՝ ցանում են կտաւ — հատն ու լամիկը։

Կտաւհատից ստանում են ձէթ և գոմէշների համար ձմեռուայ կ ս պ տ ն ⁴⁾, իսկ լամիկից ձէթ (աւելի ընտիր, քան կտաւհատի ձէթը), քիչ էլ կոպտոն, բայց ամենակարեւորը՝ աւել։ ալդ աւելներով գիւղացիք տարին-տասներկու ամիս աւելում, մաքրում են իրենց տունն ու դուռը։ Աւելը դուրս է գալիս լամիկի ցօղունից ⁵⁾։

Կտաւհատն ու լամիկը շնախելով, որ ամենից ուշ են ցանում, սակայն ամենից շուտ նրանք են հասնում։

Ջաւախքում աշնանացան չկալ, որովհետեւ ձմեռը խիստ ցուրտ է լինում և սառնամանիքը հասնում է գետնի խորքը, որն սերմնացու հատիկը մրսում, փճանում է։

Որովհետեւ Ջաւախքի արտերը ջրարբի չեն, և ամառն էլ շատ

¹⁾ Հերկ կոչւում է այն արտը, որ մի տարի առաջ լուծիւ-լուծիւ ամսին հերկում, պատրաստում են միւս տարուան ցանելու համար։

²⁾ Խոզան այն արտն է, որ 1-2 տարի ցանուել է, էլի ցանում է առանց հանգիստ տալու։

³⁾ Ալդ նմանութեամբ մի փոխաբերական դարձուածք կալ, որ աղջկալ շուտ հասնելու և տղալի ուշ հասնելու համար ասում են, (աղջիկը որ կալ՝ դարի էր)։

⁴⁾ Սրբ կտաւհատի հատիկներից հանում են ձիթահանքում ձէթ՝ նրանից մնացած բուսական մասը կոչւում է կոպտոն։

⁵⁾ Սրբ լամիկի արտն հասնում է, արտի տէրը իմաց է տալիս իւր մօտիկ բարեկամներին, որ գնան աւել քաղելու։ կանալք վաղ հաւաքում են արտը, և սկսում արմատից ամբողջովին հանել ցօղունը հատիկներով։ Ալդ ցօղունները խուրձ կապած մինչև աշուն չորացնում են։ ապա աշնանը սղկում են ձեծում են) թակերով, (փախ, որով բուրդն են թակում լուանալիս), հատիկը ցօղունից բաժանում, արտի տիրոջը տալիս, իսկ ցօղունն իրենց համար աւել կապում։

լանախ երաշտ է պատահում՝ այդ պատճառով նախ քան վարելը ցանում են, որ վարելու ժամանակ հատիկը գլորուի, ակօսի մէջ աւելի խոր թաղուի, երաշտից չփնտաւի:

Սրբ արտը ցանում-վարում են՝ նրա երեսի կոշտերը, խորդ ու բորդը, գերբակները հարթացնելու համար լծում են տափանը, վրան միջանի հողով կանգնում, որ աւելի ծանր լինի, և հարթացնում-տափնում են արտը:

Արտը տափնելուց լետով նրա երեսին մնացած քարերը հաւաքում են, դարսում արտի մէջ միջանի տեղ, որ կոչւում է ղոռդ: Զաւախքում շատ քիչ արտ կալ, որ քարից ու ղոռդից աղատ լինի:

Մեծ ընտանիքները ցանում են 30-50 սումար *), (գարի և ցորեն միասին), միջակները 10-20, իսկ աղքատները՝ 1-4 սումար հազիւ:

Չնախելով Զաւախքում ալդքան շատ են ցանում՝ սակալն ալնքան չեն ստանում, որքան Շիրակում: Շիրակում մէկին ստանում են առնուազը 5. սովորաբար 6-8ը. իսկ ալստեղ մէկին՝ 3-4, առատ տարին մինչև 5. երբեմն ալնպէս է պատահում, որ մէկին հազիւ է ստացւում 2:

Պտղաբերութեան ալդպէս սակաւ լինելն ունի իւր պատճառները. նախ ինքը հողը, որ միմիայն սև չերտ է, ոչինչ կաւալին մաս չունի մէջը, երկրորդ երկրի ցրտութիւնն է, որ չի կարող բոլոր լաւ հասնիլ, երրորդ հողի ոլժից ընկնելն է և վատ մշակութիւնը. ուղիղ 70 տարի է, ինչ կարնից (Բասէնից) զաղթած ժողովուրդը միենոյն կերպով վարում է հա վարում, առանց հանդիստ տալու և պարարտացնելու. չորրորդ, երաշտն ու շատ անգամ էլ զարնանալին սաստիկ լորդ անձրևներն են, որ հատիկը խեղդում-փտեցնում են հողի մէջ. հինգերորդ, վերջապէս սերմի չփոփոխելը. երկիրը սիրել է սերմը թէ ոչ, սերմը լաւն է, առողջ է, թէ ոչ՝ դրան նշանակութիւն դեռ չեն տուել, դեռ չեն մտածել, միշտ միենոյն սերմն են ցանում, մինչդեռ փորձուած է, որ փոփոխած (օրինակ Զլգըրից կամ Շիրակից բերած) սերմն երբ ցանել են աւելի լաւ պտուղ են ստացել:

Մինչդեռ մէկ կողմից արտերն ու ժառապառ մնում են՝ միւս կողմից հալ գիւղերն աղքերի դէգերի մէջ խեղդում են. նրանք միմիայն աղքուած պարարտացնում են մօտակալ արտերը, որոնք կոչւում են աղբին:

*) Մի սումարը 16 կող է. ցորենի կողը 50 ֆ. է, գարու կողը 40 ֆ.

Բացի այդ պատճառներից կան բնութեան արհաւիրքները, որ քիչ չեն լացացնում աշխատասէր հայ-գեղջուկին։ Դրանք են երաշտը, մուկը, կարկուտը, եղեմը, որդը, և մորեխը։

Շատ անգամ ամառը շաքաթներով երկինքը կապում է, անձրեկի կաթիլ ներքև չի ընկնում, ցանքսը կարճ մնում, տեղն ու տեղը ոչնչանում է, և եթէ ժամանակն անցնելուց լեռով անձրև էլ գալ՝ նշանակութիւն չի ունենալ, քանի որ արդէն բոլոր հատերն ամրացած են լինում։

Մուկը, որ լաճախ անթիւ քանակութեամբ առաջ է գալիս արտերում, կտրում ոչնչացնում է ողջ ցանքսը, հասկերը կրում գետնի տակի ծակերը լցնում, հաշանը կտրատում անպէտք դարձնում, լինում են անպիտի արտեր, որ ամենեկին տէրը մօտ չի գնում, որովհետև մնացած մասը գերանդի չի բռնում։

Կարկուտը օդոստոսի վերջերին, Աստուածածնայ տօնի մօտերքը միջանի ժամում խփում, տանում է ողջ ցանքը։

Իսկ ահա տարիները, որ աշնանալին եղեամներն ամառուանից են իջնում՝ բոլոր ցանքը, մանաւանդ սարոտ տեղերում, մրսեցնում, խոտ են դարձնում։

Այս պատահարների դէմ գիւղացին ոչինչ հնար չունի. ոչ փոխադարձ ապահովող ընկերութիւն կալ, ոչ արտերն ապահովցնել կալ, ոչ էլ մկան դէմ դեղ գործածել կալ։

Գիւղացու միջոցն իւր աղօթքն ու երկրպագութիւնն է. երբ երաշտը երկար է տևում, գիւղում ժողովարարութիւն են անում, մատաղ անում, աղքատ-ուքատին բաժանում. կամ խաչ ու աւետարան, Տիրամօր պատկերն ու խաչվառը դուրս հանում, Թափօր կատարում։

Շատ անգամ էլ գնում են թուրքերի գոռերը քանդում, ամբողջ կմախք, կամ զանգ դուրս հանում, տանում ջուրը զցում, որ անձրև գալ։

Պատմում են, իբր թէ երաշտի առաջ գալը սգի ր-անելուց է։ Հարուստ սովորապահներ, որոնք ահագին քանակութեամբ շտեմարանած հաց են ունենում՝ թուրք մոլլայի, կամ գէվրիշի գիր են անել տալիս, դնում իշու ծնօտի կամ դանգի մէջ, այդ զանգը դնում ծառի կատարին. այդտեղից իշու չանէն սկսում է մարդկանց համար անխելի ձանով զռալ, երկինքը կապել. ճարպիկ մարդիկ գտնում են չանէն, ջուրը զցում, միջի գիրն ալրում, երկինքը կապանքից արձակում։

Բնութեան պատահարներից ամենաստակաւ պատահողը մորեխն է. մորեխն ալստեղ երբէք չի կարող աճիլ. որովհետև նա իւր ձուռ-

գիր սուրով չի կարող ձուռն արնքան խորը թաղել, որ ցուրտը չհասնի, չոչնչացնէ։ Եթէ մորեխ պատահում է՝ դա գալիս է դրօշի, տաք երկրներէց՝ Արանից։

Ոչ պակաս պատահարն է գիւղացու համար կտաւհատի որդեկարելի է ասել շատ քիչ արտ կալ կտաւհատի, որ աղատ լինի այդ որդից։ Դրա պատճառը թիթեռնակներն են, որ ձուերն ածում են կտաւհատի նորարդորջ տերեւների վրայ։

Սակայն շատ քիչ ընտանիքներ կան այժմ, որ կտաւհատ ցանեն, մանաւանդ, որ նաւթի գործածութիւնն այժմ ամեն տեղ մտել է։ Եթէ այժմ կտաւհատ կամ լասմիկ ցանում են՝ դա ուտելու ձէթ ստանալու և աւելներ պատրաստելու համար է։

Մի արօրը, կամ լարօնան, մի օրում արնքան կվարէ, որքան զութանը $\frac{1}{3}$ օրում. ասել է արօրը մի օրում կվարէ $\frac{1}{3}$ օրավար *). իսկ օրավար ու կէսը մի դեռեատին է։ Ասել է մի արօրը $4\frac{1}{3}$ օրում կվարէ մի դեռեատին. մի օրում (80×30) ՝ 4, 5 = 533 ք. ս.

Ցանքը երբ վերջանում է և մալն ընկնում կանանչը, գիւղացին մօտ մի ամիս հանգիստ է տալիս զրաստներին, քանի որ նրանց ալլ ևս չի կարելի լծել, երբ նրանք թուլացած են նոր կանանչն ընկնելու պատճառով։ Այդ ժամանակամիջոցին (մալիսին) ասում են մալիսոց. (այդ անունից կենդան ինեի բի քակորն էլ ուրիշ խօսքով կոչւում է մալիս)։

Այդ ժամանակամիջոցում գիւղացին կարկատում է իւր տունը կամ նոր բնակարաններ շինում, իրեր ու մթերքներ է տանում քաղաք ծախելու և այլն։

Ցանքից լսող, երբ կենդանիներին կանաչ են թողնում, ալլ ևս գիշերները գիւղ չեն բերում. ցերեկը հօտաղն է արածում, գիշերը մաճկալը (եղնարած) գնում պահպանում։

Մաճկալները մօտ են լինում, եղներն իրար խառնում, մինչև կէս գիշեր սիրահարական խաղեր կանչում, զուռնալ ածում, պար գալիս, կամ հէքիաթներ ասում։ Մաճկալի (եղնարածի) կեանքը շատ անուշ է այդ ժամանակամիջոցում, երբ բնութեան հետ բացում է և նրա սիրտը, երգում է արտուտի հետ, ցնծում է ծաղկի հետ, խօսում է կարկաչող առուակի հետ, խորհրդակցում է երկնքի աստղերի հետ և իւր եարին, իւր նազելի սիրելուն լիւում, նրա կրակով այրւում...

*) Գութանի մի օրուայ վարածին ասում են գիւնդալիկ թ. ասինքն օրավար։

II.

ՀԵՐԿՈՑ ԵՒ ՉԱՅԻՐՈՑ

Լծկանն երբ մօտ մի ամիս ազատ արածնելուց լետոյ կազդուրւում է՝ սկսում է հերկոցը:

Ցանքը կատարւում է միմիայն արօրով ու արօնալով, իսկ հերկն՝ այդ երկուսից զատ և գութանով ու ջղլալով (թ.):

Արօրն ու արօնան հերկի ժամանակն էլ նոյն կարգ ու սարքն ունին՝ ինչ որ ցանոցին. սակայն գութանի ու ջղլալի հերկը բոլորովին այլ է:

Ջղլալին լծում են 4-5 զուգ գրաստ, աւելի խորը քանդում երկիրը, քան արօրով. իսկ գութանով աւելի բարդ, Գութանին լծում են 9-12 լուծք եզ ու գոմէշ. նրանով զբաղւում են մօտ 10 մարդ: Լծում են առաւօտ Լուսու-աստղը (Արուսեակ) գորս գալու պէս. ժամը 12-ին արձակում. 2 ժամ, դեռ փոքրինչ էլ աւելի հանգիստ տալիս, արածացնում, ջրում, նորից լծում մինչև լաւ մթնելը:

Գութանը մի օրում վարում է մի օրավար, իրենց ասելով գիւնդալիկ թ. մէկ ու կէս օրավարը հաւասար է մի դեռեատինի:

Հերկում են այն արտերը, որ մի կամ աւել տարի թողել են հանգստանալու. պատրաստում միւս տարուալ ցանքի համար:

Արօր ու արօնալ ամեն մարդ իրեն համար կարող է լծել, հերկել, սակայն գութան ամեն տուն չի կարող:

Այժմ շատ քիչ տուն կալ Զաւախքի գիւղերում, որ գութանը տանից լծէ. «գութանը տնէն կելնէ» դարձուածքը մի վառ ցանկութիւն է գիւղացու համար, որովհետեւ նրա կարողութեան մնացած մասերն էլ նրա համաձայն չէն են լինում:

Գութան լծելու համար միանում, մօտգամ են դառնում 2-3-4 ընտանիք և հերթով սկսում հերկել իրենց արտերը:

Գութանի մաճկալն այսինքն, միշտ մաճը բռնողն ընդհանրապէս ինքը տէրն է: Ում արտը որ վարում են, նա է պարտական «գութանի-հացը» տանելու: Գութանի-հացը սովորական արտիւն հացի պէս չէ, աւելի ճոխ և աւելի առատ: Ղարլի փլաւն ու խաշիլը թագաւորաղն են. ապուրը, մածունը, շիլէն, բանջարը, տըժվըժը, չըլպուրը, խաւիժը, փոխինդը, թիրիթը... իրեն կարգին. իսկ եթէ պատ է՝ մախոխ կամ անժուր ապուր, սիպեղ, քելս, ժախ, աղը դրած զմի, աւելուկէ ու լապազեցէ բանջար և այլն:

Գութանը, մինչև հերկի վերջանալն ամենևին տուն չէ գալիս, և ինչպէս գալ, քանի որ նրա կարգ ու սարքը քանդելը պալին

բառնալը ահագին ժամանակ է խլում, բացի այդ՝ առաւօտ շատ վաղ լծում են, երեկոյեան շատ ուշ թողնում:

Հերկելու ժամանակամիջոցն ընդհանրապէս կոչւում է հերկոց. իսկ գութանի հերկի վերաբերմամբ մասնաւորապէս՝ ագութնոցո:

Գութանաւորի մէջ ամենապատուաւոր տեղը բռնում է մաճկալը. նրան են հնազանդում ու հպատակում բոլորը, նրա կարգադրութեամբ են լծում ու թողնում, նրա թելադրութեամբ են հօտաղները գիւղից գառ ու հաւ գողանում, գութանը (արտը) տանում, մորթում, ուտում:

Ոչ մի ժամանակ երկրագործի կեանքը դաշտում (պարապմունքի ժամանակ) այնքան ուրախ չէ՝ որքան գութնոցին: Գութնոցը գիւղական հովուերգութիւնն է. այնտեղ ասում են խաղեր, սրախօսութիւններ, հանելուկներ, հօբովէլներ, և այլն. գութնոցին, ամբողջ ժամանակ հօտաղների բերանից հօբովէլն անպակաս է և կասեալ գրաստներն զուարթացած հօբովէլից աւելի սիրով են քաշում լուծը:

Հօբովէլները խիստ համեմուած են լինում զանազան ալլարանական կամ ուղղական սրախօսութիւններով:

Օր. հէնց որ մի նորատի հարս կամ ջահէլ աղջիկ է անց կենում՝ իսկոյն սկսում են.

«Ալ է, ապաւոր է'է'է',

«Ալ է կապաւոր է.

«Աղջիկ է, զըմջիկ է,

«Ինքը զըմբըմջիկ է,

«Մեր մանկլին

«Գրկելու խարճիկ է,

«Հօ'տաղ, հօ'օ'օ'...

կամ թէ չէ.

«Գութանն ընկաւ փոսը'ը'ը',

«Անղը զարկեց ակօսը.

«Ալ կապաւոր աղջիկ,

«Գամ կուշտը կանգնեմ,

«Թշերդ պահենեմ,

«Հօ'տաղ, հօ'օ'օ'...

Այն եւր համար ասէք, որ սեռի ու դասակարգի համար ասէք, որ չարանճի հօտաղները հիւսած չունենան աղգալին այդ թէև արեւդ ցփեղ, բայց համով-հոտով հօբովէլները:

Եթէ պատահում է, որ գութանը հերկում է ճանապարհի վրայի արտ՝ ճանապարհորդի առաջ կարում են հօտաղները գութանը

գուրս եկած ժամանակ և մինչև նուէր չեն օտանում, գութանը հա-
նապարհից չեն հեռացնում:

Հերկոցը դեռ չվերջացած վրայ է հասնում, խոտհարը, կամ
ինչպէս իրենք են ասում չափրոցը:

Այն գիւղերը, որոնք չափր ունին՝ նախ քան հունձը բաժա-
նում են մասերի, ապա վիճակ ձգում, ու ակում հնձել: Ափերըն-
գուր արամարդիկը շարում են չափրի երկարութեամբ ու լայ-
նութեամբ, տակից արնպէս մաքուր հնձում դեռ չհասած խոտը, որ
կասես մկրատով խուզած լինի:

Խոտը հնձելուց խոտը (ինչպէս գարին ու ցորենն են անում) անմի-
ջապէս չեն հաւաքում, այլ լասերը թողնում են մի քանի օր արևի
տակ չորանալու, ապա հաւաքում, կազմում են կոպաններ (КОПНА), ալդ
կոպաններինից պարան գցում եղներով քաշում մի տեղ՝ եղըններ
դնում: Եւ երբ բոլոր հունձը վերջանում է՝ լծում են որանի սալ-
լերը, խոտը կրում խոտնոցը, թալա (թ.) (մեծ, երկարատեղէղ) դնում,
վրէն կտուրածն չինում, քարերով արդացնում, որ քամին՝ չտանի,
անձրեւը մէջը չանցնի:

Չափրոցի ժամանակամիջոցում հնձում են և այն արօրները,
ուր խոտ է բսած լինում:

Մօտենում է քաղը. ալդ ժամանակը գիւղացու արնպիսի ծանր
ժամանակն է, որ նա գիշեր-ցերեկ հանգիստ չունի, քունը նրա հա-
մար բառիս բուն նշանակութեամբ մի իդիալ է. իրենք ասում են.
«Համան ժամանակ մարդ քիչ կմնալ, թէ մեռելը տեղէն հանէ,
դատեցնէ» (աշխատացնել):

III.

Ք Ա Ղ Ո Ց

Չափրոցը դեռ չվերջացած վրայ է հասնում քաղը կամ քա-
ղոցը: Գիւղացին լծում է սալը, վրան նստացնում իւր հարսին,
աղջիկն, մեծին ու փոքրին և տանում արտը: Գիւղում մնում են
միմիայն խապուխաս անող կանայք, ծերերն ու պտուաները:

Երիտասարդը պսպղուն գերանդին ձեռն առած հնձում է, պա-
տանին եղանը ձեռում քաղած լասը հաւաքում, եղան անում, փու-
լու է չինում, իսկ սրանց ետևից ջահիլ աղջիկն ու մանկամարդ կինը,
կամ ծերունին փոցիս են անում:

Հնձում են մինչև ժամը 8-ը կամ 9-ը, նստում մի փոքր նախա-

ճաշ են տնում, նորից հնձում են մինչև կէս օր, ահա գալիս է արտի հացը, որ կամ տունը մնացած ծերունին ձիուն բարձած է բերում, կամ արտից մի զոդ եղ են տանում, խուրջինով «հացը» գցում ուսերին բերում, կամ ինքը տանտիկինը ուսած տանում է: Հաւաքում են հացի շուրջը, «հօտաղ նստում» *), ակորժակով ուտում բրդած ապուրը, ապա մածունը ջրիւնում (ալսինքն ջրախառն անում), բրդում, խղմնցնում, գդալներն առնում, ընկնում ջանին: Վերջը պանիր-հացով կերածները կնքում, կուշտ ջուրը վրէն խմում, պառկում փուլողների կամ եղջնների տակ մի ժամի չափ հանգստանում, ու նորից աշխատում: Նրեկոխան սալը լծած, փոցխն ու եղանը, կէտերն ու կուժը վրէն բարձած գալիս են տուն, ընթրիքը վաղելում, ժամը 9-ին պառկում քնելու, միւս առաւօտ 3 կամ 4 ժամին վաղ վեր կենալու:

Այսպէս շարունակում է մինչև հնձի վերջանալը:

Որպէս սղի սովորական տրեխները չնորանան երաշտից և նրանց ոտքերը չսեղմեն, չցաւեցնեն՝ քաղցի համար լատկապէս ազալուրը դնում պատրաստում են տրեխացու կաշի, որ կոչւում է հասը: Այդ կաշին ազալրից հանելուց լետոյ փափկացնում են իւղով ու ճարպով, աւելի սւրժառւամա (լաւ) կարում, հազնում, որը խկի չէ չորանում:

Արտը հնձելուց լետոյ կոչւում է խոզան:

IV.

Կ Ա Լ Ո Ց

Քաղցը վերջանալու պէս սկսում է կալոցը:

Նախ քան կալն սկսելը՝ կալի տեղը լարդում են (դարման փռում), մի-երկու շաբաթ թողնում, մինչ լարդի գետնին կպչիլը, ապա որանի սալերը լծած զարին ու ցորենը բերում կալն են թափում, կալ անում, լծում են կամերը քշում, մանրացնում կոլորածն փռած որանի երեսը. երբ վերի երեսը մանրւում է, եղանով շուռ են տալիս միւս երեսը. այդ էլ երբ մանրւում է՝ նոր մէկից են

*) Հօտաղ նստել ասում են շրջանաձև նստած դրութեան. նստողները աջ ծունկը ծռած դնում են ձախի տակ, ձախ ոտքը դէպի դուրս մեկնում, ձախ ձեռք կախած պահում, աջ ձեռով ուտում. միւսն էլ նստում է առաջինի ծնկի ու ոտի առջև:

շուռ տալիս, և սա ալնքան է կրկնում. մինչև որանը մանրում է, ալլ ևս եղանի չի գալիս. մի քանի անգամ էլ դարձնում են կալի-թիով, ապա երբ կալը կատարեալ մանրում է՝ լծում են կապտոնը, քաշում թեղ անում, կապտոնի կամ կալքաշի տակի մնացածը ցախաւելով աւելում են հարսներն ու աղջկները. աղպիսով բոլորկալը թեղ են շինում և նոր կալ ձգում:

Երբ թեղին հակառակ ուղղութեամբ փչում է քամին՝ գիւղացին առնում է հոսելին ձեռը, մալամէն (դարմանն ու հատիկը իրար հետ խառն) տալիս է քամուն. քամին լարդը տանում է, հատիկը ներքև թողնում. ալսպիսով գիւղացին բաժանում է հատիկը լարդից, շեղջ կաղմում, որ կոչւում է թէճ. Յետոյ առնում է թէճի-թին, էրնում է թէճը, լարդի մանրունքը, փոշին կամ, ինչպէս իրենք են ասում, մղեղը ջոկում է հատից. ապա կանչում հարս ու աղջկան. նրանք խախալները (մաղի տեսակ) ձեռներին կանգնում են թէճի կողքին, մաղում բոլոր թէճը, մաքուր հացահատիկ ստանում. Աղ հացահատիկը լցնում են ջուալները, կրում ամբարը:

Աղ կերպ ծեծում են երկրորդ կալը, երրորդ կալը... մինչև վերջանալը. կալ կալ, որ մինչև 10 սալլ որանից է լինում, կալ էլ կալ՝ 1—2 սալլ:

Գարին աւելի շուռ է մանրում քան ցորենը. ալք նրա ծղնօտի աւելի թոլլ լինելուց է:

Մաղելուց ու էրնելուց լետով ստացւում են չծեծուած հասկեր. ալք չծեծուած, չմանրեցրած հասկերը հաւաքում են մի տեղ, որ կոչւում է ծանծ:

Երբ բոլոր կալը վերջանում է՝ նոր են ծանծը ծեծում. գարու ծանծն առանձին, ցորենի ծանծն առանձին:

Ծեծում են կամով. իւրաքանչիւր կամին լծում են մի զույգ եղ:

Այժմ սովորութիւն է մտել կենտուկունաւ լծում են ձիեր. ձիերը ոչ միայն կամով են մանրացնում, ալլ և իրենց պալտերով, արոփող ոտքերով. մի զույգ ձին կատարում է 4 լուծք եղան գործ:

Գիւղացու մեծ ճշնաժամը կալոցի ժամանակ անձրև գալն է. հէնց որ թխպում են ամպերը՝ ծեր, մանուկ, աղջիկ, տղալ, ալր, կին, բոլորը մըջիւնի նման թափւում են կալը, կամերը գուրս հանում, կալը հաւաքում, փոքրիկ դէզեր կաղմում, որ անձրևի տակ մնալուց չթրջի, հատիկը չծլի, չխճանալ:

Կտահատը ծեծում են ոչ թէ կամով՝ ալլ սալլերով. սալլի ծանրութիւնից նրա հատիկը թափւում է ներքև, վերեւ մնում է ճականը (ցողունը):

Աղ ճականը տալիս են կենդանիներին ուտելու. կամ երբ տուն են շինում, գերանների վրայ դարսած մարդակների ու բարակ

սալերի վրայ փռում, որ հողն ածեն, ծածկեն: Ճականն ալդ դէպքում աւելի դիմացկուն է, քան խոտը, կամ զընդըէն *):

Կամերը քշում են մինչև կէսօր, կէս օրին եղներին արձակում, տանում են ջրում, ապա նորից լծում:

Կամ լծուած եղներն ամբողջ օրը քթերը ներս կոխած կալի տակը ուտում են հատիկը, կամ ինչպէս իրենք են ասում՝ վեր են խմում:

Իւրաքանչիւր եղ օրէնն ամենատակաւը կուտէ $\frac{1}{2}$ պուդ հացահատիկ, տասը զուգը 10 պուդ. սա մի օրում, ամբողջ կալոցի ընթացքում, որ 20—40 օր է տևում, ալդքան անգամ շատ: Ալդ կորուստն ալքի առաջ ունենալով՝ Շիրակում և Ախալցխայի գաւառում եղների ղնչերը կապում են. դրա փոխարէն նրանց կերակուր են տալիս ցերեկն արձակած ժամանակ:

Կալն սկսում է սեպտեմբերի սկզբներից, վատ եղանակների պատճառով երբեմն տևում է մինչև հոկտեմբերի վերջը:

Շատ անգամ էլ պատահում է, որ ձմեռը շուտ վրայ հասնելով՝ որանի մի մասը մնում է ձեծուելու:

Յարդը մարագ են կրում քթոցով. մի կալի քթոցը կտանի 3—4 պուդ. կալատէրը քթոցը շալակած տանում է մարագի կտուրը, երթկից ներս ածում **):

Կենդանիներին, Ջաւախքում, կալոցին գիշերները ներս են անում մարագը. նրանք այնտեղ թէ ողջ գիշերը դարմանն ուտում են և թէ կոխոտում նստացնում:

Դեռ չլծուած, խամ արջառներին վարժեցնում են կալոցին. լծի մի կողմում լծում են մեծ եղ, միւսում նոր, լուծ չտեսած արջառը. սկզբից նա վեր-վեր է ընկնում, լուծը շուտ տալիս, փախչում, սամինները կոտորատում, սակայն երկար չարչարանքից լիտոյ հնազանդում է հակատագրին. մի շարաթից արդէն նա լծելու կանոնաւոր արջառ է:

Կալ ու կուտն ալդ կերպ հաւաքելուց, ներս առնելուց լիտոյ. ձմեռը գալուն պէս գիւղացին ներս է քաշում իւր տունն ու բունը. անդործութեան մատնւում մինչև միւս գարնան բացուիլը:

*) Խոտի վատ տեսակը:

**) Շիրակում լարդը մարագ քաշում են կապտոնով. նրանք մարագների ղռները, որ աւելի մեծ են քան Ջաւախքինը, բաց են անում, լծում եղներն և դարմանը կալքալով առնում ներս: